Դ. ՏԱՐԻ ԹԻՒ 1021 ԵՐԵՔՇԱԲԹԻ 17 ՅՈՒԼԻՍ 1879

# ԼՐԱԳԻՐ

ՏՆՕՐԷՆ ԽՄԲԱԳԻՐ
ԵՒ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՆԻԿ. Մ. ԹԻՒԼՊԷՆՏՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ
Ղալաթիա Պէրչէմպէ Բազար Խրճի խանի դէմը Կամար փողոց թիւ 12

## ԱԶԳԱՅԻՆ

ԹԵՐԹԸ 20 ՓՐ. ԱՐԾԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ոսկեդրամ
Կ. Պոլսոյ համար
Տարեկան ղրշ. 100
Վեցամսեայ » 50
Եռամսեայ » 25
Գաւառաց համար
Տարեկան ղրշ. 150
Վեցամսեայ » 75
Եռամսեայ » 40
Օտար երկիր տարին 40 Ֆր.ք.

## ԱԶԳԱՅԻՆ

### ՓԱՐՍԿԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Բ.

Ա. Թ. Յ. Փ.

Սիրելի բարեկամ,

Այս անգամ կուզեմ յայտնել ձեզ իմ կարծիքս թէ ինչպէս պէտք է մեր ժողովրդին բարքը փոխել արմատապէս և զայն կենաց շաւղին մէջ դնել։ Բնութեան մէջ ամեն բան կեն- կաղապարէ. անտառին մէջ որոտացող աւիծը՝ ինչպէս խոտերու ներքև բզզացող միջատը, արևուն դէմ ծափ տալով որոտացող արծուին՝ որպէս թուփի մը վրայ թափառող ճնճղուկը։ Ովկիանու անդունդը չափելով անդունդ կէտը և չնչին ձկնիկը, ամեն բան կենաց հետամուտ է. Պատերազմ՝ ապրելու համար, մա՛հ՝ կեանք տալու համար, այս է նորա խաղը։ Ասոր համար գիշերին իրուն ծովուն երեսը կ'հսկէ ողորմելի ամերիկացի հնդիկն, որպէս զի անդադարութեան իր երեսին նետած ուռկէն կեղևէն իր կեանքը քաշէ դուրս հանէ, կենաց համար հրացան իյուս բարձած իր աղօթքը կատարելով ժայռի մը ետև կ'դարանի վայրագ Փիրուզ՝ անգորդին կեանքը խլելու։ Այսպէս ռամկին համար ամեն ինչ՝ չար ճակատագիր, ատող և ուրիշ անթիւ ցնորական երևոյթներ, էակներ են, այլ ուսման դոյզն ինչ հետամուտ մարդուն՝ ամեն երևոյթ բնական հարկի մը բանադատութիւն է։ Զնչին միջատէն սկսեալ մինչև մարդկային կազմակերպեալ ընկերութիւնները իւրաքանչիւրն իր բարուց և հանճարին իրեն համար ստեղծած միջոցներուն համեմատութեամբը երջանիկ կամ ապերջանիկ, երկարակեաց կամ վաղամեռիկ կ'լինի, ինչո՞ւ թափառական ցեղերն իրենց հայրենիքը երկու կտոր փայտի և կտոր մը կտաւի մէջ ամփոփելով, աստանդական և ողորմելի կեանք կ'վարեն, զի իրենց բարուց նկարագիրն այնպէս տրամադրած է, ինչո՞ւ երեսուն միլիոն անգղիացիք 200 միլիոն հնդկի վրայ կ'ճոխանան, զի իր բարք հանճարին թելից է առած և հանճարն իր «ոյժը» բազմապատկած, ինչո՞ւ ափ մը քիւրտեր իրենցմէ բազմապատիկ թուով հայերը կ'կեղեքեն, զի բարքը մեռուցեր են հայուն ոյժը. և ի՞նչ են բարք, եթէ ոչ՝ մասամբ մը «արեան ժառանգական ազդեցութիւն» և մեծ մասամբ «կրթութեան հետևանք»։ Արդ տեսնենք թէ ի՞նչ է մեր կրթութիւն, և ի՞նչ մեր բարք։

Ընդհանրապէս ժառանգական մասամբ կերևի թէ մեր ազգը Հնդիկ Արիական ցեղին մէկ քրմական ընտանիքէն սերած է, անոր համար իր ամենէն հին աւանդութիւններն կրօնական նկարագրով տոգորուած են. Աւելցուր ասոնց վրայ և կրօնի գրեթէ հնարիչ եղող Սեմական ցեղին՝ այսինքն Ասորւոց, Արաբաց և Եփրայեցւոց հետ մեր ազգին ունեցած սերտ յարաբերութիւնները, և այն ատեն մեր «կրօնական-ժառանգական» զգացման ի՛նչ աստիճան ուժգին լինելը կ'հասկցուի։

Կրթութեան գալով՝ երեք գլխաւոր աղբիւրներէ կ'ընդունին ազգեր զայդ. —մայրերէ, կղերէ, օրէնքներէ կամ իւրերէ. Արդ տեսնենք թէ ասոնք ի՛նչ դասեր տուած են Հայուն։

Մայրեր շարունակ անոր օրրանէն սկսեալ՝ «ալիւճիւկ, տաճիկ, պարսիկ, քիւրտ, դև, դըժոխք, ահաւոր դատաստան, կայրէ կարաս, մազէ կամուրջ, գեհենի կրակ, Խրլըխ» և ն. ահաւոր նկարներով պաշարած են խեղճ տղեկին երևակայութիւնը։ Եկեղեցականները՝ շարունակ «մի՛ կալ հակառակ չարին, թէ մէկ երեսիդ զարնեն՝ միւսը դարձուր, բաճկոնդ ուզողին՝ շապիկդ ալ հանէ պատրաստ բռնէ» կ'ըսէին անբնական խրատներով թշուառին հոգին կաշկանդեր են։

Օրէնքներ՝ շարունակ այս տարտամ ազգին գլխուն վերայ պատիժ, հալածանք, Դամոկլեսի սրոյն նման կախելով՝ անոր ուղեղն ու արիւնը ցամքեցուցեր են, և այսպէս այս երեք շարաշուք կրթութիւնները ազգը գիտկնացուցած՝ նետեր են մարդկութեան անցած շաւղին վրայ՝ որպէսզի ամենքն ալ ոտնհար լինելով անցնին երթան։

Մեծանուն Տավրէն Անկլիացի գիտնականը իր հնդամեայ ճանապարհորդութեան գրքին մէջ կ'պատմէ թէ՝ «Օր մ'Ամերիկացի գերի մ'ինձ առաջնորդուած անտառ մը կերթայի բնագիտական քննութիւններ ընելու։ Ճանբան խօսակցելու միջոցին գիտուածով ձեռքիս շարժումը հնդկին երեսին դիմացէն անցաւ. ողորմելին սարսափահար՝ աչքերը չրջեց, դէմքը ծամածռեց, ձեռները աղաչաւոր կերպով առ իս տարածեց կարծելով թէ իրեն պիտի զարնէի. այս տեսարանը ամօթ եւ զղջանք ազդեց յիս՝ խորհելով որ այս ալ ինձ նման մարդ էր և գերութիւնը այս անարգ վիճակին հասուցած էր զինքը»։ Ահա օրինաց կրթութիւնը։ Դարձեալ նոյն հեղինակը կ'գրէ թէ Թայիթիի բնակիչները՝ տակաւին միսիօնարներն հոն ոտք չը կոխած՝ ուրախ, զուարթ, խաղ և խայտանք ժողովուրդ մ'էին. իսկ հիմա տրտում և լուռ են, միսիօնարաց անունը բաւական է այս վայրենիներն ահաբեկ ընելու . . .

Օր մը, կ'գրէ դարձեալ Տավրէն, մէկ երկու Թայիթիցի վայրենեաց օղի տուի, ասոնք բայց մատուընին բերաննուն վրայ դնելով ըսին «միսիօնա՛ր միսիօնա՛ր», խեղճերը կ'վախնային որ միսիօնարները կ'իմանային, ահա կրօնական կրթութիւնը, և այս վայրենիները հազիւ 30 տարիէ ի վեր միսիօնարաց «շնորհը» կ'վայելէին։ Եւ միթէ այս կրթութեան աղետալի փորձերը չենք տեսներ ամեն օր գաւառներուն մէջ մեր ազգայնոց վրայ։ Ինչո՞ւ Տիգրանակերտցին իր անմեղ մանկիկներուն հորը նետուելով ողորմելի մահը կ'տեսնէ և չյուզուիր, «վրէժ չպահանջեր ատոնցմէ» իսկ առաջնորդական վէճի մէջ իր հայրենակցած դէմ դիւցազն կ'կտրի, ինչո՞ւ Սեբաստացին գաղան Ալիի մը օձիքը կ'թողու որ ութամեայ հայ մանկան ծաղիկը խամրէ իւր պիղծ շնչովը, և առաջնորդական խնդրոյ համար տարիներով ազգ և պատրիարքարան կ'յուզէ, զի Սեբաստիա Հայաստանի ամենէն բարեպաշտ գաւառն է՝ ինչպէս ըսած է Սրուանձտեանց իւր Թորոս եղբայր անուն անմահ գործին մէջ, վասն զի հոն ճգնաւորաց երկիր է։

Ո՛հ, զայրոյթը մարդ կ'խեղդէ. բարեկամ, երբ կիմանամ Մշեցի մը իւր կնոջ իւր իսկ առաջը բռնաբարուիլը, կ'տեսնէ և կուգայ Պատրիարքարան աղերսագիր տալու, ուրիշ մը իւր կնոջ քրդէ մը յափշտակուիլը կ'տեսնէ և վրէժ առնելու համար ինքզինք կ'կախէ, անարգ մահուամբ կ'սատկի . . . ինչո՞ւ, կաղաչեմ քեզ, ո՞չ ապաքէն մեծ մասամբ մեր խեղճ մարց և տգէտ ու անպիտան քարոզիչներու, տէր պապաներուն շնորհն է այս, ինչո՞ւ Կարնեցին իւր պատւոյն դիտակցութեամբն վառուած արդարութիւն կընէ . . . վասն զի իւր բարքը խիստ տարբեր է Հայաստանի միւս կողմերէն, ինչո՞ւ արծաթապաշտ Երեւմեա մը

